Արձանագրություն N 2

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից մեկանգամյա օգտագործման թղթե (ստվարաթղթե) բաժակների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/16 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

10 նոյեմբերի 2021թ.
ժամը՝ 11:30

ք. Երևան, Բաղրամյան 19

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Քեոյան, Մ.Համբարձումյան, Ս.Սարգսյան, Ա.Լալայան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Սաղաթելյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	***Չափաբաժնի անվանումը***	***Գնման հայտով սահմանված գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)***
1	մեկանգամյա օգտագործման բաժակներ	375000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 08.11.2021 թ.-ին ժամը 11:30-ին:

էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 09.11.2021 թ.-ին ժամը 11:30-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Հասցեներ
1	«ՕՎԱԼ» ՊԼԱՍՏԻԿ ՍՊԸ	ՀՀ.ք.Երևան, Հաղթանակ 1 փող., 1/8

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/16 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Հ/Հ	Մասնակից	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/		
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին
1	«ՕՎԱԼ» ՊԼԱՍՏԻԿ ՍՊԸ	300000	20%	360000	300000	20%	360000

Աճուրդն ամփոփվել է 09.11.2021թ. և Համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել «ՕՎԱԼ» ՊԼԱՍՏԻԿ ՍՊԸ-ն

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ /հայտում առկա փաստաթղթերի, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակցի ներկայացրած հայտը, արձանագրեց, որ «ՕՎԱԼ» ՊԼԱՍՏԻԿ ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում, ինչպես նաև eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝

- Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում /Հավելված N1/ 2-րդ կետի 2-րդ պարբերությունում բացակայում է մասնակցի անվանումը, 3-րդ կետում մասնակցի անվանումը նշված է Սոնյա Ավագյան, մինչդեռ պետք է նշվի ընկերության անվանումը:
- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը ՝ /Հավելված 1.2/ հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:
- eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում ՝ բաժակի չափսերը վերին հատվածի (A) տրամագիծը ենթակա է շտկման: Բացակայում են ՝ «Նախքան մատակարարումը բաժակի նմուշն անհրաժեշտ է համաձայնեցնել պատվիրատուի հետ: Բաժակները պետք է նախատեսված լինեն սառը և տաք ջրի օգտագործման համար: Ապրանքները պետք է լինեն չօգտագործված (նոր): Առաքումն ու բեռնաթափումն իրականացվելու է Մատակարարի կողմից, առաքման վայրը՝ ք. Երևան, Բաղրամյան 19» նախադասությունները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-21/16 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ 10.11.2021թ-ին նիստը կասեցնել՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ «ՕՎԱԼ» ՊԼԱՍՏԻԿ ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

8.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 12.11.2021թ. ժամը 11:30-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

9/. 12.11.2021թ. ժամը 11:30-ին նիստը վերսկսելու վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 12.11.2021թ. ժամը 11:30-ին: Հանձնաժողովն արձանագրեց, որ «ՕՎԱԼ» ՊԼԱՍՏԻԿ ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ՕՎԱԼ» ՊԼԱՍՏԻԿ ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝0:

10. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

12.11.2021թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ «ՕՎԱԼ» ՊԼԱՍՏԻԿ ՍՊԸ-ին հայտարարել որպես ընտրված մասնակից:

10.2 Հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն անգործության ժամկետը կիրառելի չէ, քանի որ գնային առաջարկ է ներկայացրել միայն մեկ մասնակից:

10.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Վարդան Թորոսյան

անդամներ՝ _____ Վազգեն Քեռյան

_____ Մարիամ Համբարձումյան

_____ Սարգիս Սարգսյան

_____ Անժելա Լալայան

Քարտուղար՝ _____ Հերմինե Սաղաթելյան